

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мелк».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Թիֆլիսի Գաղաքային Կրէդիտային Ընկերութեան Վարչութիւնը, յայտնելով Ընկերութեան Վարչութեան Նախագահ.

ԱՆՏՈՒՆ ՍՈՒՍՈՒՆՈՎԻԶ ԿՕՐԳԱՆՈՎԻ

Հանձնաժողովը, խնդրում է հանդուրժել յիշատակը յարգել ցանկացող անձանց, չորս բերել հոգեհանգստին, որ տեղի կունենայ Ընկերութեան շինութեան մէջ (Պուշկին-կայա, ուրբաթ, յունվարի 18-ին, ցերեկվայ 1 ժամին) (17 եւ 18-ին) 2—2

Բազուի հայ գրամատիկ խմբի գերասանուհի Տ. ՍԻՐԱՆՈՅՇ, խոր վշտով համակ-
ւած, յայտնում է բարեկամներին եւ ծանօթներին իր ամենամոտիկ եւ թանկագին մօր

Ս Օ Փ Ի Ա Չ Ա Լ Ը Բ Ե Ա Ն Ի

Հանր. որ տեղի է ունեցել Կ. Պոլսում, որի հոգեհանգստեան պաշտամունքը կատարվե-
լու է կիրակի, յունվարի 20-ին, Բազուի ու Լուսաւորիչ եկեղեցուսէ 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յարարեութիւններ առեւտրական առարկե-
զում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայերը «КАВ-
КАЗСКИЙ ВЪСТНИКЪ» առաջին մէջ. Նաւթար-
դիւնարեւոյների XVI համաժողովի առիթով.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ար-
տաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Լաւ մարդու
յիշատակին:

ԾԱՌԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՌԵՏՐՈՎԱՆ ԱՍ- ՊԱՐԷՉՈՒՄ

Յունվարի 10-ին, Պետերբուրգի մի քն-
կերութեան մէջ, որի գործունէութիւնը
նորիցմ է արդիւնաբերութեան եւ ա-
ռեւորի զարգացման, կարգւոյն մի հե-
տաքերական գեղեցում այն պատճառնե-
րի մասին, թէ ինչու Ռուսաստանը չէ կա-
րողանում ընդարձակել իր արդիւնաբերու-
թիւնը եւ առեւտրական յարաբերութիւն-
ները:

Չեկուցման մէջ առաջ էին բերված մի-
նիստը Վիտտէի կարծիքները եւ քաղաքական
պետութիւնների հարաբերութեան մասին,
Միացեալ-Նահանգների Ֆինանսների մի-
նիստի նախկին օգնական Վանդերվուդի
հայեացքները ֆինանսական գործառնու-

թիւնների մասին եւ ուրիշ խորհրդածու-
թիւններ:

Պարզվեց, որ Ռուսաստանի արտաքին
առեւտուրը վնասվում է այն անհոգու-
թիւնից, որով վերաբերվում են առեւտր-
հիւպատոսները զէպի արդիւնաբերու-
թեան եւ առեւտրին վերաբերեալ գործերը,
նրանց չափազանց ձեւական եւ անիշխ-
վերաբերումները զէպի անցած ժողովի
տարւոյ գործողութիւնները, բանկային
գործառնութիւնների վերին աստիճանի
թոյլ զարգացումը եւ առհասարակ մեծ
տգիւտութիւն այն բոլոր գործերի վե-
րաբերութեամբ, որոնք կապ ունեն ար-
դիւնաբերութեան եւ առեւտրի հետ:

Մեր երկրի մօտ գտնվող Պարսկաստանը
եւ Թիւրքիան, որոնք մեր գիւժարական-
ները սկսել են եւ վարում են առեւտուր,
նկատվում են նոյն չիմնական պակասու-
թիւնները, որոնք Պետերբուրգի շինարար-
ութեան նիստում պարզվեցին Ամերիկայի եւ
ուրիշ երկրների վերաբերութեամբ: Մեր
հարեան պետութիւնների մէջ Ռուսաս-
տանի առեւտուրը միշտ գտնվել է անհոգ
եւ բարձրից գրութեան մէջ: Հիւպա-
տոսները ին կարողացել իրանց հմուտ-
ութեամբ, իրանց ուսումնասիրութիւններով
օգտուելով լինել առեւտրականների

ընանցի աշակերտներից էր—եւ այդ զէպը նրա
ուսանողական կեանքի պարծանքն էր կազմում
երկար տարիների ընթացքում վաղեմի կաճ-
կանների մտերմ քարեկամութիւնը, շատ ան-
գամ, տեսնելով նրան խոսելու, տկամայ պա-
կերացել է իմ առաջ Ստեփանոս Նազարեանը
եւ եւ միշտ կարծել եմ, թէ երեւի ճիշդ այդ-
պէս է եղել խոսելու ինքը, մեծ հրապարակա-
խօսք. բարձրահասակ, գլուխը բարձր բնած, խորիւր ձայնով, համարձակ ու ազնիւ ոճով,
համեմատ ժողովրդական ասացածներով կամ
ու. Գրեթէ վերցրած վկայութիւններով ու դար-
ձեւածներով: Մինչեւ անգամ երկուսի ֆիզի-
քական պատկերի մէջ գտնուէր չէր գտնել ընդ-
հանուր նմանութիւն, որքան կարելի է դատել
Նազարեանից լուսանկարից:

Իսկ ինչ վերաբերում է Կաճկանների բա-
րոյական պատկերին, մեր խորին համոզմուն-
քով դրա մեծ մասը եւ պարտական էր նոյն
Նազարեանից, որի ուսման եւ դիւթիւ անձնա-
ւորութեան ազդեցութեան տակ էր չարունա-
կում գտնվել նա իր ամբողջ կեանքում: Եւ
Կաճկանն մնաց հաւատարմ Նազարեանից
յիշատակին, լինելով միշտ կենդանի քարոզող
նրա պատգամների, թէ իբրեւ նախկին աշա-
կերտ եւ թէ ակամատես նրա բոցավառ գոր-
ծունէութեան Նազարեանից Կաճկանների խօ-
սակցութեան ամենասիրած նիւթն էր, եւ ա-
մեն անգամ, երբ այդպիսի առիթ էր ներկա-
յանում, Կաճկանն առանձնապէս կենդանա-
նում էր, աչքերը փայլում, գծապատկերներ

համար եւ եղել են միայն քաղաքական
յարարեութիւնների ներկայացուցիչներ,
երբեմն մեծ ծառայութիւններ մատուցա-
նելով այդ առարկայում Ռուսաստանին:

Այժմ պահանջները փոխվել են եւ պե-
տութիւնների մէջ աճող առեւտրական փո-
խադարձութիւնը թելադրում է հետեւի
գործողութեան ուրիշ եղանակներ: Ան-
հրաժեշտ է, որ արդիւնաբերութեան եւ
առեւտրական յարաբերութիւնների խն-
դիւնները ստանան առանձնակի հետաքը-
րութեան նշանակութիւն, որպէս զի
պետութիւնների մէջ սկսված եւ օրեցօր
ընդարձակվող արդիւնաբերական յարաբե-
րութիւնները կարգանան կանոնաւոր կեր-
պով զարգանալ, փոխադարձ կերպով օգ-
նելով երկուստեք երկու կողմերին էլ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԸ «КАВКАЗСКИЙ ВЪСТНИКЪ» ԱՄ-
ՍԱԳՐԻ ՄԷՋ

IV

Քննադատութիւնը ազատ է: Քննադատը գը-
րականութեան մէջ մի դասուոր է, որ խղճմը-
տանքով, շիտակութեամբ, որչա կերպով պիտի
յայտնէ իր վճիռները:

Սա այդպէս է եւ եթէ մենք սկսենք եր-
կար ու բարակ դատողութիւններով ապացու-
ցանել այս աւելի քան տարրական ճշմար-
տութիւնները, պ. Ա. Ս. կատարեալ իրաւունք
կունենայ ասելու մեզ, որ մենք ծախում ենք
հազար անգամ կրկնված եւ ամենքից ու ամեն
տեղ ընդունված մտքերը:

Այսպէս է, այս Բայց տեսք թէ ինքը, պ.
Ա. Ս., ինչպէս է վերաբերվում այդ ճշմար-
տութեան: Դերասանական խումբը անցեալ
տարվայ հոկտեմբերին ներկայացրեց Նիւրն-
բերգի «Եգիպտէ» պիէսը. «Մշակը», մանրամասն
վերլուծելով այդ գրութեանը, ցոյց տալով նրա
պակասութիւններն ու արժանաւորութիւնները,
ասաց որ պիէսը ընդհանրապէս վատ տպաւո-
րութիւն չէ թողել: Պ. Ա. Ս. վրդովված է
այս խօսքերի դէմ: Նա չէ թաղանթում, որ ինքը
պատում էր «Մշակից» աւելի շուտ գովասանք-
ների աւելորդութիւն անգամ, քան այդքան
չափաւոր կարծիք:

Հրապարի է այս վրդովմունքը, չէ: Ինքը, պ.
Ա. Ս., հիացել է այդ պիէսից, համարեա
ոչինչ պակասութիւն չէ գտնում նրա մէջ եւ

առատութեամբ գովասանք է շնայում իր
պաշտած հեղինակին, որի առաջ, ի դէպ է ա-
նը, նա խոսել էր ծխում անցեալ տարվայ ըն-
թացքում նոյն «КАВКАЗСКИЙ ВЪСТНИКЪ»-ի էջե-
րից: Շատ լաւ, ոչ ոք չէ բռնում պ. Ա. Ս.-ի
ձեռքից, ոչ ոք չէ խանդարում նրան գրել այն,
ինչ ուզում է: Բայց ինչ իրաւունքով, հարց-
նում ենք, նա պահանջում է, որ ամենքը իր
նման մտածեն, իր նման դատեն:

«Մշակի» ընդհանրաւոր շատ բան է գրել պ.
Ա. Ս.-ին հետաքրքրող գործի մասին. բայց
պարտք վերցրել է միայն մի նախադասութիւն
եւ իր վիշտն է յայտնում նրա մասին ինչու
Միթէ չէ ասվում, թէ պիէսի գլխաւոր տեղեկե-
ցիւն, որ կուսութեան հարցն է, չէ կարելի
հասարակական մի հարաւոր հարց համարել, որ
անհատական զէպը գուցէ կարելի լինի
հաշտվել այն լուծման հետ, որ ստանում է
այդ հարցը պիէսի մէջ, «բայց ընդհանրացնել
եւ իբրեւ սկզբունք պաշտպանել» ոչ մի զէպ-
քում չէ կարելի վստահանալ: Յետոյ գործող
անձինքները, յետոյ նոյն իսկ գլխաւոր հերոսու-
հին, նրա անքնական դիրքը, նրա ուշացած ա-
ռաքիւնութիւնը միթէ բաւականաչափ չեն պարզ-
ված «Մշակի» յօդուածի մէջ:

Ինչից է առաջացել պ. Ա. Ս.-ի այդ աստի-
ճան անհիշելի «նեղորոտութիւնը» կր կամենա-
յինք մի քիչ կանգ առնել այս հարցի վրա:

Պարտք ասում է, թէ տեղական «երեք ուսու-
լրագիրները արձանագրեցին այն խոր տպաւո-
րութիւնը, որ թողեց պիէսը թատրոնի հասա-
րակութեան վրա, թեմայի հետաքրքրաշարժ լի-
նելը եւ նրա աղող մշակութիւնը»: Դժբաղդարար,
այն, այդպէս էր: Երեք ուսուլրագիրների ա-
սածը, դժբաղդարար, այդքանը չէր, այլ աւելի
շատ եւ մեծը պէտք է վկայենք, որ պ. Ա.
Ս., չը նայած իր չափազանց մեծ համակրու-
թիւններին զէպի հեղինակը, նոյն իսկ շատ
մեղմ բառերով է պատմում երեք լրագիրների
գրածները:

Դժբաղդարար ենք ասում ոչ միայն այս զէպ-
քի առիթով: Սա դեռ չափն բան կարելի է հա-
մարել: Դժբաղդարար ենք ասում, նկատի ու-
նենալով, որ դա մի ընդհանուր երեւոյթ է:

Ահա թէ ինչպէս:

Մեր կեանքն ու գրականութիւնը օտարներին
ծանօթացնելու գործը յանձն առած պարտները
մի բան միայն գիտեն—մի գլուխ գովել, մի
գլուխ փառաբանել: Սա փաստ է, որ գնալով
աւելի եւ աւելի աչքի է ընկնում իբրեւ մի

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԼԱԻ ՄԱՐԴՈՒ ԹԻՃԱՏԱԿԻՆ

Անցեալ դեկտեմբերի կէսին Բագում վախ-
ճանվեց Աստուածատուր Կաճկանն, որի մա-
նը արձանագրվեց եւ մասնով կողմից: «Մշա-
կում» նոյնպէս մի քանի անգամ գրվեց ընդհա-
նուր գծերով այդ հազուադէպ մարդու վաղա-
ժամ մահվան առիթով: Բայց այդ առիթով գրը-
ված բոլոր դամբանականների մէջ մի պակաս
կայ, որը մենք կուզենայինք, մինչեւ անգամ
պարտք ենք համարում լրացնել, որովհետեւ
հարցը վերաբերում է ոչ միայն Կաճկանին,
այլ եւ մի աւելի խոշոր անուն, մեր բոլորիս
պաշտելի Ստեփանոս Նազարեանից, որի յի-
շատակը, մեր կարծիքով, սերտ կերպով կապ-
ված է Կաճկանի յիշատակի հետ, եւ վեր-
ջինիս մասին գրողը չէ կարող չը յիշել տա-
լինքն:

Այո, Կաճկանն ամենից առաջ Լազարեան
ճեմարանի անն էր, այն էլ Նազարեանից չըմանի
ճեմարանի, եւ ուղղակի Նազարեանից արա-
կերտ: Իսկ համալսարանում նա համաժողովարար
փէլ էր եղել, ընդամենը երկու տարի, սակայ-
ն լինելով թողնել նրան ընտանեկան հանգա-
մանների պատճառով: Կաճկանն Նազա-

ճարտար բերանից երկու խօսք:

Կաճկանն անշահափութիւնը, անտար-
բերութիւնը եւ ուղղակի թշնամական վերա-
բերումները զէպի հարստութիւնը արդէն յայտ-
նի են ամենքից: Ապրիլի 18-ին Բագում մի հա-
նակամիջոցով, երբ իր շուրջը եւ ամեն ինչ
ապրում էր միմիայն հարստանալու տենչով,
երկրպագում էր մամուլային եւ խոսքով
միմիայն նիւթական աղողութեան առաջ, Կաճ-
կանն ոչ միայն մնաց բոլորովին խուլ ու
անտարբեր զէպի այդ վակիւնային, այլ ընդ-
հակառակը բոլոր ժամանակ Երեւոյի արցունք
էր թափում ժամանակակից բարքերի անկման
վրա: Նա ոչ միայն չէր ձգտում հարստանալու,
չէր նախանձում հարստացողներին, այլ բաւա-
կան էր, որ իր բարեկամներից մէկն ու մէկը
յանկարծ հարստանար այս կամ այն սովորական,
օրինաւոր համարված ճանապարհով, որպէս զի
կորցնէր նրա աչքում նախկին յարգանքը: Փողը,
իբրեւ անիւտափելի չարիք, նրա համար նշա-
նակութիւն ունէր այն չափով միայն, որ կու-
րողանար իր ընտանիքի տարրական պահանջ-
ներին բաւականութիւն տալ ու ձեռք չը մեկ-
նել ուրիշ օգնութեան: Չը պէտք է մոռանալ,
որ ծնվել էր հարուստ ընտանիքում եւ կեանքի
մեծ մասը, իբրեւ Ղլարի խոշոր կալուածա-
տէր, անց էր կացրել հարստութեան մէջ, որից
զրկվել էր պատահաբար: Քանի-քանի անգամ
Կաճկանն բազմել էր հարուստի դուռը, սրա
կամ նրա համար օգնութիւն կամ պաշտօն
հայցելով, բայց որ նա զէլ մի անգամ դիմած

ՅՕ.ՅՏԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴԻԿՈՎԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բագու շարժվելով 2 ժամ 32 րոպ. (3 ժ. 30 ր.), հասնում է Բագու գիշերվայ 3 ժամ 58 ր. (4 ժ. 56 րոպեին):

Արագ գնացք Բագուից—Թիֆլիս գուրս է գալիս չորեքշաբթի օրերը երեկոյան 10 ժ. 41 ր. (11 ժ. 39 ր.) հասնում է Թիֆլիսից երեկոյան 12 ժ. 47 ր. (1 ժ. 45 ր.):

Պատասխան գնացք Բագուից գուրս է գալիս գիշերվայ 12 ժ. 2 ր. (1 ժամին), հասնում է Թիֆլիսից երեկոյան 6 ժ. 24 ր. (7 ժ. 22 ր.), գուրս է գալիս Թիֆլիսից երեկոյան 7 ժ. 54 ր. (8 ժ. 52 ր.), հասնում է Բագուից առաւօտեան 8 ժ. 33 ր. (9 ժամ 31 րոպեին):

Մարդատար գնացք Բագուից գուրս է գալիս երեկոյան 3 ժ. 35 ր. (4 ժ. 33 ր.), հասնում է Թիֆլիսից առաւօտեան 10 ժ. 45 ր. (11 ժ. 43 ր.), գուրս է գալիս Թիֆլիսից գիշերվայ 11 ժ. 47 ր. (12 ժ. 45 ր.), հասնում է Բագուից առաւօտեան 6 ժ. 33 ր. (7 ժ. 31 ր.):

Մարդատար գնացք Բագուից գուրս է գալիս առաւօտեան 8 ժ. 53 ր. (9 ժ. 56 ր.), հասնում է Թիֆլիսից երեկոյան 8 ժ. 33 ր. (9 ժ. 31 ր.), գուրս է գալիս Թիֆլիսից գիշերվայ 11 ժ. 47 ր. (12 ժ. 45 ր.), հասնում է Բագուից առաւօտեան 6 ժ. 33 ր. (7 ժ. 31 ր.):

Մարդատար գնացք Բագուից գուրս է գալիս առաւօտեան 8 ժ. 53 ր. (9 ժ. 56 ր.), հասնում է Թիֆլիսից երեկոյան 8 ժ. 33 ր. (9 ժ. 31 ր.), գուրս է գալիս Թիֆլիսից գիշերվայ 11 ժ. 47 ր. (12 ժ. 45 ր.), հասնում է Բագուից առաւօտեան 6 ժ. 33 ր. (7 ժ. 31 ր.):

Պատասխան գնացք գուրս է գալիս Թիֆլիսից գիշերվայ 4 ր. 40 ր. (5 ժ. 38 ր.), հասնում է Բագուից առաւօտեան 5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.), Ալեքսանդր օպու 8 ժ. 37 ր. (9 ժ. 35 ր.), Կարսից երեկոյան 12 ժ. 23 ր. (1 ժ. 12 ր.):

Պատասխան գնացք Կարսից գուրս է գալիս երեկոյան 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.), հասնում է Ալեքսանդր օպու 7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.), Կարսից գիշերվայ 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), Թիֆլիսից առաւօտեան 6 ժ. 47 ր. (7 ժ. 45 ր.):

Յառն գնացք Թիֆլիսից գուրս է գալիս երեկոյան 12 ժ. 30 ր. (1 ժ. 28 ր.), հասնում է Սանատինից երեկոյան 5 ժ. 12 ր. (6 ժ. 10 ր.) և Կարսից երեկոյան 7 ժ. 19 ր. (8 ժ. 17 ր.):

Յառն գնացք Կարսից գուրս է գալիս առաւօտեան 11 ժ. 45 ր. (12 ժ. 43 ր.), հասնում է Սանատինից երեկոյան 1 ժ. 30 ր. (2 ժ. 28 ր.) և Թիֆլիսից երեկոյան 6 ժ. 8 ր. (7 ժ. 6 րոպեին):

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՐ ՀԻՌԱՆԻԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Գուկիա, Վորոնոյի արձանի հանդէպ) Ամեն օր, բացի կիրակի օրերից, ԱՌԱՋՈՏԵՐԸ

Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. վերաբուժական, վերականգնող (սիֆիլիս) և միզառն. հիւանդ.

Կ. Ս. Զիլովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային.

Կ. Բ. Գեղիկով—12—1 ժ. ականջի, քթի և կողմի.

Զ. Բ. Բարանասեան—11—12 ժ. կանանց և երեխայից հիւանդ.

Ս. Պ. Կարապետեան—1—11/2 ժ. ներքին և երեխայից.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ն. Ն. Ռոստամբեկով—5—6 ժ. վերաբուժական և մորթու.

Ա. Ն. Եղալովսկի—6—7 ժ. նեարդային (երեխայից), վերքեր և մորթու.

Կ. Ա. Թաթևանեան—7—7 1/2 ժ. ներքին և երեխայից.

Բ. Ա. Նախասարգեան—7 1/2—8 ժ.

Վարդ 50 կ. չքաղցրեղ քիչ կամախորհրդի (կոնսերվատի) և օպերացիայի համար առանձին.

Օ. Ս. Առլանիակի—տանը, ծաղկաձառ և բրձրական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.

Հիւանդանոցի վերատեսուչ Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ԵՐԿԻՐԱՍԻ ԻՆՏԵՆՏԻ

Ս. ԲԱՆԱԹՐԵԱՆ

Ընդունում է երկրաչափական և հարթաչափական (նիվելլիրովայն) և այլ տեսակի գծագրական աշխատություններ՝ շուր մատակարարելու, կանաչիկացիայի, ոռոգման, ճանհաների ցամաքացիներ, անտառների բարեկարգության, ընդունելի գործի, ճանապարհների և փողոցների շինությունների և կանոնադրությունների, քաղաքային և այլ անշարժ կայունների կարգաւորությունների, յատակագծի վրա գնահատական (оценочный сбор) տուրքի համար, քաղաքային և այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրենսդրական կարգով և այլն.

ԲԱՆԱԹ, «Երկրաչափական Նամակներ» հիւրանոց. կամ Թիֆլիսի Ավանդան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում.

54—100

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵՏԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱՆԿՆԵՐ ԿՕՆՍՍՈՒՍՏՐԱԿՏԻ առևանքի մէջ նշանակված է ածուրդ ներկայ տարվայ յունվարի 30-ին՝ կապովով տարու. Ախալցխայի ո. Փրկիչ եկեղեցուն պատկանող գիւղերը, որոնք գտնվում են Ախալցխայի գաւառում. Մասնակցել ցանկացողները պէտք է ներկայացնեն պատշաճ զբաւական, իսկ պայմանների հետ կարող են ծանօթանալ դիւանատանը 10—2 ժամը.

Անդամ կոնսիստորիայի՝ Զարաթա քահանայ Զարեգեանց 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, յունվարի 19-ին,

նշանակված է

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍ

սովորական կարգով

2—2

ԳՈՒՅՏՆԵՐԵՐ

ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Յ. Տէր-Միրաքեանի հետեւեալ աշխատութիւնները.

«Դեռահամարների ազատ ընթերցանությունը», 190 յանձնարարելի ու մերձելի գրքերի ցուցակով, գին է 60 կ.

«Ժողովրդի ընթերցանությունը»—20 կ.

«Այբբենարան» առանց ուսուցչի կարգով սովորելու համար, 94 պատկերով—35 կ.

Դիմել՝ Тифлисть. Книжный магазинъ "Гуттенбергъ", Г. Галустану, Лорисъ-Меликовская, № 11.

4—5

ՇՈՒԼԱՎԵՐԻ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՐԿԱԽՈՐԷ

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՂԻ-ՖԷԼԴԵՐՈՒՂԻ.

Ցանկացողները կարող են դիմել տանուտէր Մէհրաբեանին.

4—3

ԲՈՒԹԱՍԵՆԵԱԿ

ԴՕԿՏՐ Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ

Նորագոյն ապարաններով և էլեկտրական մեքենաներով. մասնաւորապէս

ԲՅՈՒ, ԲՅՈՒ, ԱԿՆԵՋԻ ԵՒ ԿՐԺԳԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Сергиевская ул., д. 12.

ՄԻ ՀԱՅ ԱՇՆԿԵՐՏ, որ չքաղցրեղեան պատճառով չէ կարողանում շարունակել իր ուսումը, բարեկործների ուշադրություն է հրաւիրում Հասցէ՝ Ներսէսովայայ փողոց, տուն իշխան Թումանովի, Մէլքունյանի կարասիքի խանութ. Հայկ Տէր-Գրիգորեանին

2—8

Պետերբուրգի բժշկական վարչութեան լոյրուղեմամբ: Մեծ արկղիկը 5 րուրի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.



ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաղերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեկուր Դուրս է եկել նաեւ բարբոսին նոր միջոց

ՁՈՒԹԿԱՐԸ

Երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սևութիւնը, մուգները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն: Այդ գները քաղաւոր են. մեծ արտակը, արկղիկի մէջ, 2 րուրի, փոքրը—1 ր. 50 կ. Մալիւսում են բոլոր պարֆումերական և դեղագործական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինեան փողոց, տ. № 15, բրնձկանային № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկասեան դեղատան պարանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեսինեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պոպովի և Արիստակովի դեղատներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պատուով.

24—100

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՊԱՐԱՅԻՆ ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՆՈՒՅԻՆ

հաղորդում է ի տեղեկութիւն ընդհանուր, որ Վարչութեան նախագահ Անտոն Սօրոմոնովի կողմանով մահվան պատճառով, նրա պաշտօնը, Ընկերութեան կանոնադրութեան հիման վրա ստանձնեց՝ ընտրութեան մէջ աւագութիւն ունեցող զինվորական Գէորգի Բօգդանովիչ Տէր-Ասատուրով, իսկ այս վերջինի պաշտօնը, նոյն կանոնադրութեան հիման վրա, ստանձնեց աւագ կանգիդատ Ալեքսանդր Սօրոմոնովիչ Կօրգանով:

1—1

Հայոց Բարեգործական Ընկերութեան օգուին ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Կիրակի, Յունվարի 20-ին, վնեկու է

Պ Ա Ր Ա Հ Ա Ն Դ Ե Ս

Կ Ս Տ Ի Լ Ի Օ Ն Ո Վ

պարերի ժամանակ

THEE PAUSE

զաւեշտով, որին կը մասնակցեն տ. տ. Գաբունիա-Յագարելի և Արմենեան, պ. պ. Մանշան, Միրաքեան, Մանգինեան, Կարապետեան, Տէր-Միքայէլեան և ժողովրդական աչրը Զիւն Ալեքսէ և երեկոյան ժամը 9 1/2-ին

ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐԸ 2 ր. 10 կ.

Theepause-ում մասնակցել ցանկացողները վճարում են առանձին 30 կոպ.

Տոմարները ծախվում են իշխ. Մ. Թումանեանցի (Варягинская № 8) և ժողովարանի (9, 12, 18, 20) 3—5

Շ Ղ Թ Ա Յ

Նաւթարդիւնաբերական ընկերութեան վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն պ. պ. Լաժնեան, որ Կիրակի օրը, Յունվարի 20-ին, առաւօտեան ժամը 10-ին, Բաղաքային տան գալիս ինքնուրուշ նշանակված է

Ա Ր Տ Ա Կ Ա Ր Գ Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ

Պարագմունքի առարկաներն են. 1) 1901 թ.ի համառօտ հաշիւը. 2) ժամանակն անցրա փայլերի հարցը.

Յայտարարվում է նոյնպէս, որ Վարչութիւնը նշանակել է 4-րդ 50/0 վճարը, այսինքն րուրի ամեն մի փայլն, նոյն ամսի 21-ից մինչեւ 26-ը ներկայացնելու.

Խնդրվում է վճարի ժամանակ ներկայացնել փայլերը.

(12, 18)

2—2

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Լ Է Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում

Հ Ա Տ Ո Ր Ե Ր Կ Ր Ո Ր Դ

XVIII ԴԱՐ

Առաջին ամս

ԳԻՆԸ 1 ՐՈՒՐԻ 50 ԿՕՊԵԿ

Ծախվում է. 1) հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը, Հասցէ՝ Тифлисть, Редакция Мшакъ. 2) «Մուրճ» տնային խմբագրատանը, Հասցէ՝ Тифлисть, Редакция "Мурчъ. 3) «Գուտենբերգ» գրականատնոցում Հասցէ՝ Тифлисть, Книжный магазинъ "Гуттенбергъ". Նոյն տեղերում ծախվում են նոյն հեղինակութեան ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ մնացած օրինակները. Գինը 1 րուրի 50 կոպէկ:

ՀԱՇՈՒՆՊԱՀՈՒԹԵԱՆ ԿԱՐՆԵԱՅԵՐ XIV շրջան

ՆԻԿՈՂԱՅՈՑՍ ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան»

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկը:

ՊԱՐԱՊՈՒՆԻՔԻ ԱՌԱՐԱՆՆԵՐ ՆԵՒ

- Ա) Կրկնակի խտրական հաշուապահութիւն բոտ ամսնայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերտային գործարանական հաշուապահութեան
- Բ) Առեւտրական թուարանութիւն
- Գ) Առեւտրական նամակագրութիւն
- Դ) Առեւտրական և մուրհակների կանոնադրութիւն
- Ե) Ֆեղագրութիւն և ամենապատ ձեռքերի ուղղելը

Պարագմունքները սկսվելու են 1902 թ.ի յունվարի 25-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՉՈՐՍ ամսից յետոյ:

ԻՐԱՔԱՅԱՆՉԻՐԻ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ԲՈՒՐԸԼԻ

Ցանկացողները թիւղ դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ 6 ժամ երեկոյան, ԿՈՒԿԻՄ, Նիկոլայովայայ փողոց, սեփական տուն, № 46. (Николаевская ул. № 46):

Վերջինիս հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍԻՈՒՄ, հեղինակի մօտ, և Խուսառտանի բոլոր յայտնի գրականատնոցներում: Գինն է 3 ր. 50 կոպէկ: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պատի ծախս վճարելու:

3—25

Паровая Рисоочистительная Мельница „ВОСТОКЪ“ ВЪ БАКУ

Принимаетъ заказы на рисъ всѣхъ сортовъ. Прейсъ-куррантъ и образцы высылаются бесплатно.

9—10

СЕКРЕТЬ КРАСОТЫ ГЛИЦЕРО-ВАЗЕЛИНОВОЕ МЫЛО МОЛОДОСТИ А.СІУМ К. МОСКВА. 20 коп. кув.